

**«Լավագույն փորձ» կամ օրինակելի նախագիծ
Կրթական և մշակութային ծրագրեր
Ծրագրի նկարագրումը, վերլուծումը և գնահատումը**

Ծրագրի հեղինակներ՝ Մարի-Կլարտե Օ'Նեյլ և Կոլետ Դյուֆրեն-Տասսե

Մասնակցությամբ Նիկոլ Գեշեի, Կլեր Մերլո-Պոնտիի, Նատալի Շտեֆենի, Անն Սոֆի Գրասսենի

Նախաբան

ՄԵԿԱ-ի սույն փաստաթղթի նպատակն է բացահայտել կրթական ծրագրի **նախագծման, իրականացման և արդյունքների գնահատման** էական կողմերը:

Միտված է օգնել մասնագետներին, ուսանողներին և գիտաշխատողներին՝ վերլուծելու ցանկացած նախագիծ կամ ծրագիր՝ արդյունքում ի հայտ բերելով ընթացքի դինամիկան, բարդությունը, ուժեղ ու թույլ կողմերը:

Այսպիսով, սույն գործիքը դառնում է կրթական ծրագրի կամ դրա նախագծի վերլուծության և/կամ գնահատման կիրառելի մոդել:

Թանգարանի այն համոզմունքը, թե անկախ ամեն ինչից պետք է առաջարկել բացառիկ մշակութային կամ գեղարվեստական փորձ, միջնորդներին հաճախ դրդում է անփութորեն

մտածել կազմակերպվող ծրագրի մասին և, ինչպես հարկն է, հետամուտ չլինել ամբողջական ծրագրի կոնկրետ նպատակներին:

1. Փաստաթղթի մանրամասն բովանդակությունը ներկայացնում է համառոտ վերլուծական աղյուսակ, որը կարող է ծառայել որպես «հուշաթերթիկ»՝ գործիքի անմիջական, ակադեմիական կամ մասնագիտական օգտագործման ժամանակ:

2. Սույն գործիքում նկարագրված տարբեր փուլերի համար բերված օրինակները նշված են շեղատառերով, ուղղանկյուն շրջանակի մեջ:

Բովանդակություն

Ներածություն. Կրթական և մշակութային ծրագրեր: Դրանց ահմանումը և դերը :

Ի՞նչ է կրթական և մշակութային ծրագիրը
Կրթական և մշակութային ծրագրի դերը
Ինչ է որոշում կրթական և մշակութային ծրագիրը

1. Նախագծում - Ծրագրի պլանավորումը

ա) Նախագծի միջավայրը

Թանգարանի բնույթը
Հավաքածուների բնույթը
Նախագծի շարժառիթը

բ) Նախագծի ծագումը

գ) Շահառուները

դ) Նպատակահարմարությունն ու հիմնավորումը

Ինստիտուցիոնալ նպատակահարմարությունը
Գիտական նպատակահարմարությունը
Սոցիալական նպատակահարմարությունը
Բյուջեի հիմնավորումը

ե) Համագործակցություն և գործընկերներ

զ) Ռեսուրսները

Նյութատեխնիկական ռեսուրսներ
Ֆինանսական ռեսուրսներ
Մարդկային ռեսուրսներ
Օրակարգ

է) Նպատակներն ու խնդիրները

ը) Բովանդակությունը

Հնարավոր բովանդակությունների բազմազանությունը
Թեմայի ընտրությունը հնարավոր տարբերակներից
Թեմաների համադրումը

թ) Միջնորդային միջոցները

Հնարավոր միջոցների բազմազանությունը
Միջոցների ընտրությունն ըստ կոնկրետ չափանիշների
Միջոցների ներդաշնակ համադրությունը

ժ) Հանրային մասնակցությունը

ի) Բովանդակություն - Միջնորդային միջոցներ – Հանրային մասնակցություն համակարգումը

լ) Ծրագրի շուրջ հետազոտությունների կանխատեսումը

Զուգակցվող/զուգընթաց ուսումնասիրություններ
Գնահատման ուսումնասիրություններ
Տվյալների հավաքագրման և մշակման պայմանների կանխատեսում

խ) Կառավարման կանխատեսումը

Ժամանակի կառավարում
Միջոցների կառավարում
Անձերի կառավարում

ծ) Հաղորդակցությունը

Ներքին
Արտաքին

II. Ծրագրի իրականացումը

ա) Գործարկումը

Ժամանակի կառավարում
Անհրաժեշտ սարքավորումների տեխնիկական նկարագրություն
Բանախոսների ընտրություն
Գործընկերների համաձայնության ձեռք բերում
Հաղորդակցություն
Անվտանգության պայմանների ստուգում
Բյուջեի վերահսկում
Ընդունման պրոցեսի/Լոգիստիկայի կազմակերպում
Հանրության կառավարում

բ) Գործողությունների ընթացքը

Միջավայրի կառավարում
Սցենարի իրականացում

III. Ծրագրի արդյունքների գնահատումը

ա) Տվյալների մշակում

Համադրում
Նկարագրություն
Մեկնաբանություն
Քննադատություն

Եզրակացություններ և հետևանքներ, որ հետագայում հարկ է հաշվի առնել

բ) Տվյալների տարածում/Զեկույցի պատրաստում

Ամփոփ ներկայացում
Ամբողջական հաշվետվություն

IV. Ծրագրի որոշ ասպեկտների հավանական վերամշակումը

Նպատակները

Եզրակացություն

Ներածություն. Կրթական և մշակութային ծրագրեր: Դրանց ահմանումը և դերը :

Հակված ենք այն կարծիքին, որ հարկ է դիտարկել թանգարանը որպես մի կառույց, որի գիտական և մշակութային դերակատարումը խիստ կարևոր է և հստակորեն հենված իր իսկ ռեսուրսներին:

Ա) *Ի՞նչ է կրթական և մշակութային ծրագիրը*

Թանգարանն իր այցելուներին մի շարք առաջարկներ է ներկայացնում, որոնք կարելի է բաժանել երեք կատեգորիաների.

- Ռեսուրսները, որ թանգարանը կարող է տրամադրել հանրությանը (հավաքածուներ, տարածքներ, գիտական վավերագրեր և/կամ կողմնորոշիչ տեղեկատվություն, փորձաքննություն)
- Գեղարվեստական կամ գիտական արտադրանքը (ցուցահանդես և դրա կատալոգը, գեղարվեստական կատարում, երաժշտական կամ թատերական ներկայացում)
- Կրթական կամ մշակութային ծրագրերը

Այս գործիքն էապես վերաբերում է կրթական և մշակութային ծրագրերին, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Գեղարվեստական կամ գիտական արտադրանքի որևէ կողմի արժեվորումը

- կապված իր ունեցած ռեսուրսներից որևէ մեկի հետ և/կամ
- հաստատության կողմից՝ իր ամենատարբեր այցելուների համար:

Հ.Գ. Այս սահմանման մեջ կարելի է ընդգծել կենդանի արվեստների և նոր լրատվամիջոցների մասնավոր դեպքը, որտեղ թե մեկը, թե մյուսները, կախված հանգամանքներից, կարող են նմանվել արտադրանքների կամ ծրագրավորումների:

Մի ցուցադրության շրջանակում թատերական պիեսի արտադրություն/Թատրոնի օգտագործումը որպես միջնորդային միջոց/ Նոր ԶԼՄ-ներ/միջնորդության թվային սահմաններ

Բ) *Կրթական և մշակութային ծրագրի դերը*

Թանգարանի կրթական գործառույթը մարդկանց զարգացումն ու կատարելագործումն է: Թանգարանը կարող է իրականացնել այդ գործառույթը երկու տարբերակով.

- Առաջարկելով ստույգ նպատակներով ծրագրեր, որոնք հստակորեն նախագծված են յուրաքանչյուր նպատակին հասնելու համար: Ըստ համաձայնագրի՝ դրանք կոչվում են կրթական ծրագրեր:
- Առաջարկելով ընդհանուր նպատակներով ծրագրեր. շահառուներն օգտագործում են դրանց բովանդակությունն իրենց հայեցողությամբ: Ըստ համաձայնագրի՝ այդ ծրագրերը կոչվում են մշակութային:

Կրթական և մշակութային ծրագրերը կարող են իրականացնել երեք գործառույթ.

- Առաջարկել լրացումներ՝ ժամանակավոր կամ մշտական ցուցահանդեսների միջոցով իրականացվող գիտական կամ գեղարվեստական տարածման համար:
- Հարմարեցնել այդ տարածումը որոշակի հանրությունների:
- Ներգրավել նոր հանրությունների/մարդկանց:

Կրթական կամ մշակութային ծրագրերը կարող են անցկացվել պատերի ներսում կամ պատերից դուրս և կազմել մեկ առանձին միջամտություն կամ միջամտությունների շարք:

Գ) *Ի՞նչ է որոշում կրթական և մշակութային ծրագիրը: Դերը:*

- Ցուցումներ
 - միջազգային (ԻԿՕՄ-ի առաջարկությունները)
 - ազգային
 - դասակարգումները թանգարանների աշխարհում (Ֆրանսիայի թանգարաններում)
 - գերատեսչական պահանջները (դպրոցների գեղարվեստական կրթության մասին օրենքները Ֆրանսիայում, երիտասարդների գիտական կրթության ոլորտի օրենքները ԱՄՆ-ում, որտեղ կարևորությունը տրված է թանգարաններին):
 - թանգարանային (գրվածքների ազդեցությունը ԻԿՕՖՕՄ-ի կողմից տարածված «մասնակցային թանագարանագիտության» շուրջ)
- Արտաքին ազդեցությունները
 - սոցիալական (հազեցած իրադարձությունների, մարքեթինգի, նոր տեխնոլոգիաների զարգացումը՝ հաշվի առնելով ֆիզիկական, մտավոր և սոցիալական դժվարությունները)
 - քաղաքական (գաղափարախոսությունների կամ մշակութային դիվանագիտության ազդեցությունը)
 - գիտական (գիտելիքների և հետազոտությունների վիճակը)

1. Նախագծում - Ծրագրի պլանավորումը

Այս էական փուլը ներառում է հետևյալ ասպեկտները՝

(ա) Նախագծի միջավայր, (բ) Նախագծի ծագում, (գ) Շահատուններ, (դ) Նպատակահարմարություն և հիմնավորում, (ե) Համագործակցություն և գործընկերներ, (զ) Ռեսուրսներ, (է) Նպատակներ և խնդիրներ, (ը) Բովանդակություն, (թ) Միջնորդային միջոցներ, (ժ) Հանրային մասնակցություն, (ի) Բովանդակություն - Միջնորդային միջոցներ – Հանրային մասնակցություն համակարգում, (յ) Ծրագրի շուրջ հետազոտությունների կանխատեսում, (խ) Կառավարման կանխատեսում, (ծ) Հաղորդակցություն:

ա) Նախագծի միջավայրը

Պայմանները, որոնց առկայությամբ ծնունդ է առնում ծրագիրը.

- Թանգարանի բնույթը (չափ, հավաքածուներ, անձնակազմ և այլն)
- Ինչի² հանդեպ է պատրաստվում կիրառվել միջնորդությունը (մշտական հավաքածու, ժամանակավոր հավաքածու, հնագիտական վայր և այլն)
- Հիմնական մտահոգությունները, որ կոչ են անում այս ծրագրի անհրաժեշտությանը և արդարացնում այն.
 - Բովանդակությունը (ցուցադրության թեմատիկ բարդությունը)
 - Հասարակությունը (որին բնորոշ է թանգարանների հանդեպ նվազ հետաքրքրությունը)
 - Միջնորդության միջոցը (որը ցանկալի է հասարակության համար)
 - Հաստատությունը (այն հասարակության կողմից ոչ ճիշտ հասկացված կամ գնահատված է)
 - և այլն

բ) Նախագծի ծագումը

Ծրագրի ստեղծումն ու զարգացումը խթանող տարրերը

Էքսկուրսավարի ուղեկցությամբ թանգարանում շրջայց կազմակերպելու խնդրանք մի քննչության կողմից

Խթանող տարրի բնույթը.

- Հատուկ խնդրանք

Ուսուցիչը խնդրում է հատուկ թեմատիկ էքսկուրսիա՝ կապված իր դասի ծրագրի հետ ...

- Ի պատասխան ցուցումի

Մշակույթի նախարարության հրահանգը. առաջարկել «Չինաստանի տարվան» առնչվող իրադարձություններ

- Ի պատասխան որևէ ճնշող իրադրության

Միջհամայնքային լարվածություններն առաջ են բերում համայնքի կարիքներն ավելի լավ հաշվի առնելու հրատապ անհրաժեշտությունը

- Տարածքի դիտարկում

Որոշակի օրերին ընտանեկան խմբերի ներկայությունը պատկերասրահներում, առանց համապատասխան առաջարկի

- Անձնական բնագղ

Հավաքածուի նյութականությունը կարող է օգնել հաղթահարել խուլերի՝ մշակույթի հասանելիության հետ կապված դժվարությունները

- Շրջանառվող գաղափարներ

Մանկական այցելությունները խրախուսում են հետագա չափահաս այցելությունները

- Հետազոտության նախկին կամ վերջին արդյունքները

Այցելությանն օգնող փաստաթղթերի գնահատման հուսադրող արդյունքները՝ արված գործընկերների կողմից

զ) Շահառուները

Շահառուներն այն անձինք են, ում ուղղված է ծրագիրը:

Հաստատությունը չի կարող միննույն կարևորությունը տալ հանրային բոլոր տեսակներին, որոնց նա ընդունում է, կամ կարող էր ընդունել: Հանրային քաղաքականությունը նույնացնում է կարևորագույն համարվող հանրայինների բնույթը, հետևաբար նաև եղանակը, որով կարող է ընդունել յուրաքանչյուրին: Այդ քաղաքականությունը պետք է կապված լինի հաստատության գլոբալ քաղաքականության հետ:

Շահառուները երկու տեսակ են լինում.

- Կամ նրանք հանդիսանում են դիմորդներ մի ծրագրի, որն իրենց առաջարկել է թանգարանը՝ ելնելով իր ռեսուրսներից: Այս դեպքում թանգարանն արձագանքում է բնակչության որևէ կարիքի, որ կարող է լինել անհատական, ինստիտուցիոնալ, քաղաքական: Թերևս անհրաժեշտ է թանգարանի հաստատումը՝ համաձայն վերջինիս քաղաքականության (սոցիալական նպատակահարմարություն, ռեսուրսներ՝ հավաքածուների, անձնակազմի կամ միջոցների առումով, և այլն):

Մի շրջանի գրոսաշրջության մատակարարները տեղական թանգարանին խնդրում են կազմակերպել էքսկուրսավարի ուղեկցությամբ այցեր՝ օտար լեզուներով

- Կամ թանգարանը նախաձեռնում է իր սեփական ծրագիրը: Այն այսպիսով խրախուսում է մի զարգացում, որը սոցիալական առումով ցանկալի է թվում (մտահորիզոնի ընդլայնում, «նոր լինելն ավելի լավ է» կարգախոս)՝ առաջարկելով բնակչությանը ծառայություններ, որոնց մասին մարդիկ չեն մտածում, կամ ուղղված են այն այցելուներին, որոնք իրականում չեն գնում թանգարան:

Նորարարական ծրագիր՝ հասցեագրված երիտասարդ մայրերին և նրանց խնամակալության տակ գտնվող մանուկներին:

- Վերոհիշյալ դեպքում պետք է.

- Որոշել հասարակությանը այն օղակը, ում ցանկանում ենք հասցեագրել:

Զբոսաշրջիկների շրջանում թանգարանն ավելի տեսանելի դարձնելու համար էքսկուրսավարի ուղեկցությամբ այց առաջարկել քաղաքի տաքսու վարորդներին, որպեսզի նրանք խրախուսեն հիշյալ հաճախորդին ուղղվել դեպի թանգարան:

- Հիմնավորել այդ ընտրությունը՝ ելնելով թանգարանի քաղաքական կողմնորոշումից և ռեսուրսներից:

դ) Նպատակահարմարությունը և հիմնավորումը

Ծրագրի նպատակները սահմանելուց և շահառուներին ընտրելուց հետո արդեն անհրաժեշտ է հաշվի առնել այդ ծրագրի նպատակահարմարությունը, այսինքն՝ համապատասխանությունը որոշակի պահանջներին: Դրանք կարող են լինել ինստիտուցիոնալ, գիտական, սոցիալական կամ բյուջետային.

- Ինստիտուցիոնալ նպատակահարմարությունն իր քաղաքականությամբ և տրամադրության տակ եղած միջոցներով համապատասխանում է նախագծի զեկույցին, այսինքն.
 - Հաստատությունում ներկայացված ռեսուրսների ուժեղ և թույլ կողմերը՝ հավաքածուների, գիտական և մասնագիտական ռեսուրսների յուրահատկությունը:

Հավաքածուների հետ կապված որևէ ծրագրի կազմակերպումը թանգարանում ավելի նախընտրելի է, քան ծախսատար իրադարձության առաջարկն առանց հավաքածուների հետ ակնհայտ մշակութային կապի:

- Հաստատության իրական կամ փնտրված կերպարը

Նոր տեխնոլոգիաների ոլորտում ճանաչված փորձաքննություն ունեցող թանգարանը կարող է առաջարկել ծրագիր, որը հիմնված է վատորակ տեսախաղի վրա:

- Հաստատության կառավարման ընտրությունը

Մի թանգարան, որը ձգտում է ավելացնել իր ֆինանսական ռեսուրսները, տոմսերի վաճառքը, կառաջարկի անվճար հասանելիությամբ ծրագիր:

- Հրահանգները և արտաքին ճնշումները

Առաջնահերթությամբ ընդունվող դպրոցական օղակի այցելուների/հանրային ընտրությունը (տարրական, միջնակարգ) կատարվում է յուրաքանչյուր դպրոցական օղակի պատասխանատու վարչական մարմնի (քաղաք, մարզ) և թանգարանը կառավարող վարչական մարմնի (քաղաքային թանգարան, ազգային թանգարան) համաձայնությամբ:

Դիտողություն

Ինստիտուցիոնալ նպատակահարմարությունը դյուրացնում է ամբողջ հաստատության կողմից նախագծի ընդունումը: Նախագիծը կարող է այդուհանդերձ հաստատվել որպես

փոփոխության խթան, ուժ՝ իր յուրօրինակությամբ մասնակցելով հաստատության զարգացմանը:

▪ Գիտական նպատակահարմարությունը

Գիտական որակը հիմնված է ծրագրում տրված տեղեկատվության և գիտելիք ապահովող առարկայի միջև կապի վրա: Այս կապը պետք է լինի սերտ, քանի որ կրթական եւ մշակութային ծրագրերի դերերից մեկը գիտական փորձաքննության և ոչ մասնագետ հանդիսատեսի միջև միջնորդությունն է:

Այս որակին հասնելու համար հարկավոր է, որ ծրագրի բովանդակությունը հիմնված լինի տվյալ բնագավառի փորձագետների կողմից հաստատված թարմ գիտելիքների կամ հավաքագրված և լրջորեն մեկնաբանված հետազոտական տվյալների վրա:

Հանրությանը տրամադրվող տեղեկատվության թարմացում՝ հիմնված հնագիտություն և առարկայի հիմնական զարգացումների վրա:

Այն հաղորդում է փորձագետների տարածայնությունների կամ կասկածների մասին: Ծրագրի ընդհանուր որակը մեծապես կախված է այս տեղեկատվության որակից:

▪ Սոցիալական նպատակահարմարությունը

Անհրաժեշտ է հստակ պատկերացնել հասարակության հատկանիշները, հաստատության և հանրային ծառայությունների՝ հասարակության մասին կարծիքը:

- Ծրագրի եւ այն սոցիալական միջավայրի հատկանիշների կապը, որտեղ գտնվում է թանգարանը:

Թանգարանը գտնվում է գյուղական կամ քաղաքային միջավայրում, որտեղ կա կամ չկա բազմամշակութային համայնք, տնտեսապես բարենպաստ կամ անբարենպաստ միջավայրում, զբոսաշրջային տարածքում, կոնկրետ քաղաքական իրավիճակի կենտրոնում և այլն:

- Ծրագրի և թանգարանի սոցիալական դերի ինստիտուցիոնալ պատկերացման միջև կապը:

Ըստ իր կառավարման՝ թանգարանը համարվում է վերահսկողական հավանական միջոց՝ քաղաքում գտնվող քրեակատարողական հիմնարկի համար:

- Հաստատության պատկերը
- Կրթական ծառայության պատկերը: Այս ծառայությունը կարող է ծրագրի համար ընդունել սոցիալական ուղղվածություն, որը տարբերվում է թանգարանի ուղղվածությունից:

▪ Բյուջեի հիմնավորումը

Ծրագիրը ներառված է ընդհանուր բյուջետային քաղաքականության մեջ, քանի որ հաստատության ընդհանուր ծրագրի մաս է կազմում:

Այս ներդաշնակ ինտեգրումը ապահովելու համար ծրագիրը հետևում է հաստատության կառավարման սովորական կանոններին: Այն ենթակա է բյուջետային խիստ

կանխատեսումների (ծախսեր եւ եկամուտներ), այն ապահովում է առաջարկի որակի և սպասվող ֆինանսական օգուտի միջև հավասարակշռությունը:

Մենք կհետևենք, որպեսզի կրթական ֆունկցիան ունենա ֆինանսավորման մասնաբաժին՝ ըստ հաստատության՝ թանգարանների համար հանրության կարևորության մասին արված հայտարարությունների:

ե) Համագործակցություններ և գործընկերներ

Հաստատություններ կամ անհատներ, որոնց հետ համագործակցում ենք ծրագրեր ստեղծելու նպատակով: Համագործակցությունը պետք է դրական հետևանքներ ունենա ծառայության և թանգարանի համար, լինի դա կարճաժամկետ, երկարաժամկետ կամ միջին տևողության:

Այս համագործակցությունը կարող է լինել երկու տեսակ:

- Համագործակցություն թանգարանի այլ բաժինների հետ:
- Համագործակցություն արտաքին սուբյեկտների հետ:

Մեկ կամ բազմաթիվ համագործությունների հնարավոր համապատասխանությունը որոշելու համար պատասխանենք հետևյալ հարցերին.

- Ի՞նչ նպատակով համագործակցել:
 - Ընդլայնել հաստատության միջամտության սահմանները
 - Բարձրացնել առաջարկի որակը և այլն:
- Ի՞նչ միջոցներով:
- Ու՞մ հետ համագործակցել:
- Ի՞նչ դեր կտրվի յուրաքանչյուր անդամի:
- Ի՞նչ ենք պատրաստ տրամադրել կամ ի՞նչից կհրաժարվենք այս գործընկերության շրջանակներում:

Արդյո՞ք տարբեր գործընկերներ նույն կերպ են վերաբերվում բարոյական հարթությանը: Յուրաքանչյուր գործընկեր ի՞նչ հարաբերական կարևորություն է տալիս տնտեսական օգուտին՝ համեմատած սոցիալական կամ մշակութային օգուտի հետ:

զ) Ռեսուրսները

Ռեսուրսները ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն են:

Այս միջոցները կարող են լինել շատ տարբեր բնույթի, ինչպես հաստատությունների բազմազանության (չափ, տարածաշրջան, ֆինանսավորում, հավաքածու, անձնակազմի բնույթ), այնպես էլ իրենց ընդհանուր քաղաքականության եւ կրթական պատճառներով՝ Կարելու է հաշվի առնել անհրաժեշտ ռեսուրսների հետեւյալ կողմերը՝ նյութատեխնիկական, ֆինանսական, մարդկային, օրակարգային:

- Նյութատեխնիկական ռեսուրսներ
 - Ընդունարան՝ հարմարեցված թիրախային լսարանին:

Հանդերձարան խմբերի համար, սննդի վայրեր, հարմարեցված գուգարաններ, երեխաների տակաշորերը փոխելու անկյուն:

- Նախատեսված գործունեությունը իրականացնելու համար տարածքներ և անվտանգության համակարգ:

Նյութական հնարավորություն ունենալու կոնկրետ տարածք սեմինարների համար՝ դրանք թանգարանների պատկերասրահներում կազմակերպելու փոխարեն:

- Գործունեության համար անհրաժեշտ սարքավորումներ:

Համաժամանակյա թարգմանության համար անհրաժեշտ սարքավորումներ, արվեստագետի պարագաներ, հագուստներ:

- Գործունեության, հեռարձակման կամ անիմացիայի համար տարածքների առկայություն:

▪ **Ֆինանսական ռեսուրսներ**

- Ֆինանսական միջոցներ՝ սահմանված ըստ նախատեսված գործունեության բնույթի, մարդկանց թվի, բանախոսի հատկանիշների:

Հրավիրել հայտնի մեկին կամ ներգրավել տեղացի դերասանի, առավելություն տալ հատկապես մասնագետների կամ կամավորների միջնորդական աշխատանքին:

- Հարմարվել բյուջետային օրակարգին

Պահանջել միջոցներ ժամանակին ողջ հաստատության բյուջեի պլանավորման համար, ինչպես նաև կարողանալ օգտվել չնախատեսված ֆինանսավորման աղբյուրներից (անսպասելի հովանավորություն, բյուջեի մնացորդ):

- Հաշվի առնել բնական միջոցները

Խնդրել հովանավորչական ծառայություններ, օգտվել տեղական անվճար արտադրանքից:

▪ **Մարդկային ռեսուրսներ**

- Աշխատակազմի անհրաժեշտ քանակ՝ ծրագրի անցկացման եւ կազմակերպման համար: Այս մասը որոշում է հնարավոր հանդիպումների քանակը՝ հաշվի առնելով հյուրընկալված խմբերի բնույթը (որոշ խմբեր պահանջում են խիստ վերահսկողություն):
- Բանախոսների հատկանիշները և հմտությունները

Բանախոսների հմտությունների հնարավոր տատանումները պետք է հարմարեցված լինեն խմբերի և հավաքածուների բնույթին:

- Միջնորդության մասնագետներ

Այս մասնագետները նախընտրելի են՝ հաշվի առնելով նրանց գիտական և հաղորդակցական հմտությունները՝ անկախ նրանց վճարվող գումարից:

- Թանգարանի գիտաշխատողները (ֆոնդապահներ, ռեստավրատորներ, գրադարանավարներ, գիտաշխատողներ):

Խնդիրը կլինի նրանց ազատ ժամանակ ունենալը և հանրության հետ շփվելու հմտությունները:

- Սատարող ուսուցիչներ

Թանգարանը պետք է գնահատի նրանց՝ ֆորմալ կրթության շրջանակներում միջամտելու հմտությունները:

Պատմական գործչի մասին քննարկման տարբեր միջոցները դպրոցում կամ թանգարանում:

- Թանգարանի այլ աշխատողներ, որոնց գիտելիքները եւ հաղորդակցման հմտությունները պետք է հաշվի առնել:

Թանգարանի հսկիչներ, որոնք զբաղվում են էքսկուրսիաներով:

- Հրավիրված բանախոսներ՝ արվեստագետներ, մասնագետներ: Իրենց արվեստի կամ գիտական բացառիկ հմտությունների համար հրավիրված անձանց հաղորդակցման հմտությունները այնուամենայնիվ պետք է ստուգվեն:

Ի՞նչ ազդեցություն կունենա ցուցադրված նկարիչներից մեկի ներկայությունը հանրության վրա՝ համեմատած որևէ արվեստաբանի կողմից ներկայացված արվեստի գործի ստեղծման հետ:

- Կամավորներ

Նրանց դերի կարևորությունը և գիտական ու հաղորդակցական հմտությունների աստիճանը կարող է ակնհայտորեն տարբերվել ըստ երկրի և հաստատությունների, և անկասկած պետք է ստուգման ենթարկվի:

- Օրակարգ

Որոշ ժամանակահատվածներ բարենպաստ են ծրագրեր ստեղծելու համար և կարող են ազդել ծրագրի բովանդակության կամ դրա լսարանի բնույթի վրա:

Մայրության տոն, թանգարանների միջազգային օր, դպրոցական արձակուրդներ:

Է) Նպատակները և խնդիրները

Նպատակները կարող են լինել ընդհանուր կամ ավելի կոնկրետ:

*Ընդհանուր նպատակներ (զարգացնել դիտարկման հմտությունը),
Ավելի կոնկրետ նպատակներ (ճանաչել որևէ արվեստագետի գործերը, ավելացնել
հաճախումների քանակը)*

Ծրագիրը կազմակերպվում է այնպես, որ նպատակներն իրականացվեն:

Նպատակները կարող են լինել տարբեր տեսակի՝ տնտեսական, գաղափարական կամ միտված անհատների զարգացմանը:

Անհատի զարգացման տարբեր միջոցներ կարող են փնտրվել՝ սկսած զգացմունք առաջացնելուց մինչև գիտելիքների/տեսական գիտելիքների ձեռքբերում:

Ստորև ներկայացված են զարգացման տեսակները:

- Ընկալողական

*Զգացմունք՝ ֆորմալ զգայունություն
Գիտելիք՝ ի՞նչ դիտարկել և ինչու՞*

Տեսական գիտելիք՝ ինչպես դիտարկել

- Ճանաչողական

Զգացմունք՝ զարգացնել հետաքրքրասիրությունը

Գիտելիք՝ փաստացի գիտելիքների ձեռքբերում ծրագրի շրջանակներում

Տեսական գիտելիք՝ համեմատել և ինչպես համեմատել

- Աֆեկտիվ

Զգացմունք՝ զգալ հուզված, կլանված կամ չհավանել

Գիտելիք՝ բացահայտել ճաշակը

Տեսական գիտելիք՝ հուզվել կամ հետաքրքրվել նոր առարկաներով, արտահայտել ճաշակը

- Սոցիալական

Զգացմունք՝ կարեկցանք, համակրանք, հակակրանք

Գիտելիք՝ տվյալ մշակութային խմբի քաղաքական կառուցվածքի մասին գիտելիքի ձեռքբերում

Տեսական գիտելիք՝ ինչպես համագործակցել այլ մշակույթի մարդկանց հետ

ը) Բովանդակությունը

Ծրագրի շրջանակներում առաջարկված խոսքի բովանդակությունը և/կամ փորձը:

Բնագիտական ցուցահանդեսի ժամանակ կարող ենք առաջարկել իրարից շատ տարբեր տեղեկատվություն պարունակող էքսկուրսիաներ՝ բույսերի գեղեցկության, բնութագրի, ծագման տարածաշրջանի, սոցիալական օգտագործման և այլնի մասին:

Ծրագրի բովանդակությունը մշակվում է՝ օգտագործելով երեք հաջորդական քայլեր, որոնք են՝ հնարավոր բազմազան բովանդակությունների իրազեկություն, հնարավոր բովանդակությունների առաջարկների ընտրություն, ընտրված բովանդակությունների ձևակերպում:

- Հնարավոր տարբերակների բազմազանություն

Բանախոսը տեղյակ է շրջակա միջավայրի կողմից առաջարկված հավաքածուների և դրանց առնչվող գիտելիքների հնարավոր տարբերակների շրջանակին և բազմազանությանը:

Եզիպտոսի որևէ հնագիտական հավաքածու կարող է ներկայացվել մարդաբանական, հնագիտական, գեղարվեստական, կրոնական եւ այլ տեսանկյուններից:

- Հնարավոր բովանդակությունների առաջարկներ

Բովանդակության ընտրություն հնարավոր տարբերակներից

Պատմության թանգարանի Եզիպտոսի բաժնում առաջարկվող այցը կվերաբերի փարավոնների ժամանակների առօրյա կյանքին:

Առաջնահերթությունը չի տրվում մեր ունեցած մասնակի գիտելիքների բովանդակության ընտրությանը և կողմնորոշմանը, այլ բովանդակության հնարավոր բազմազանության լիարժեք իրազեկմանը:

Այս ընտրությունը կարող է կատարվել՝ ելնելով տարբեր չափանիշներից.

- Բովանդակության հետ կապված հետաքրքրությունը

Ծրագրի ընթացքում տրամադրված տեղեկատվությունն ավելի շատ հիմնվում է հիմնարար հասկացությունների վրա, քան դիպվածային:

Հնագիտությունը՝ ներկայացված որպես պատմության մեկնաբանման գործընթաց /ընդդեմ/ տեղեկատվության՝ տրված հնագիտական հետազոտությունների ճշգրիտ արդյունքների մասին:

- Ցուցահանդեսի բովանդակության և բուն ծրագրի բովանդակության միջև ցանկալի հարաբերությունը:

Ծրագրի շրջանակներում առաջարկված ելույթը կարող է.

- Ցուցահանդեսի թեմայով համառոտ ելույթ լինել

Ներկայացնել նկարչի կարիերան ծրագրված կոնֆերանսում, մոնոգրաֆիկ ցուցահանդեսի շուրջ:

- Ծավալվել կամ խորանալ թեմայի շուրջ

Զարգացնել մարդաբանական ասպեկտները ցուցահանդեսում, որը ներկայացնում է վերջին ժամանակների հնագիտական պեղումների արդյունքը; ապահովել բովանդակային տարրեր:

- Առաջարկել անկախ թեմա

Պատանիների համար կազմակերպել կենդանիների ճանաչմանն ուղղված ծրագիր՝ 17-րդ դարի եվրոպական նատյուրմորտը ներկայացնող ցուցահանդեսում:

Ցուցահանդեսի թեմայի հետ ծրագրի կապը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Ընտրությունը՝ համաձայն ինստիտուցիոնալ քաղաքականության

Բնության պատմության թանգարանի տնօրինության կողմից կատարված ընտրություն՝ միտված կենսաբազմազանության քննարկմանը, այլ ոչ՝ բույսերի գեղեցկությանը:

- Ընտրությունը՝ կապված հավաքածուների հարաբերական կիրառության հետ

Այս կամ այն բովանդակության համապատասխանությունը ներկայացված հավաքածուին և միջավայրին (որտեղ իրականացվում է ծրագիրը), որի բուն նպատակն է աջակցել ուսումնասիրությանը և մեկնաբանել տեսածը:

Թանգարանների սրահներում, դասասենյակում կամ լսարանում իրականացվող ծրագրերի տարբերությունը:

- Ընտրություն՝ կապված հանրության հետ

Հանրության հետ կապված երկու բնութագրիչներ են կարևորվում՝ բովանդակության ճանաչման մակարդակը և ակնկալիքները: Այն նկատի ունենալու համար մենք կհարմարեցնենք

- Բովանդակության ուղղվածությունը

Արվեստում կնոջ արևմտյան ներկայացվածության վերաբերյալ ծրագիր՝ նորեկների և հատկապես կանանց համար:

- Բովանդակության մակարդակը

Ինչպե՞ս տարածել աստղաֆիզիկան լայն հասարակության շրջանում:

Որն էլ լինի ընտրությունը, անհրաժեշտ է հետևել, որ ծրագրի բովանդակությունը համապատասխանի հաստատության գործունեության կատարելությանը և նպատակներին, որն էլ կարելի է իրագործել թանգարանային ծրագրի միջոցով:

Երեխաներին չսահմանափակել միայն պաստառներին պատկերված նապաստակներին հաշվել տալով (գարգացնելով ուսումնասիրելու, զննելու ունակությունը), այլ ձգտել զարգացնել նաև թանգարանային այլ կարևոր հմտություններ, ինչպիսին պատկերագրության ընկալումն է և խորհրդանիշների վերծանումը:

○ Թեմաների համադրումը

Բովանդակության բաղադրիչների կազմակերպում այնպես, որպեսզի կառուցվի դինամիկ և հետևողական այցի սցենար.

○ Սցենարի վրա կազդի դերը, որ կհատկացվի ներկայացվող հավաքածուին.

– Հավաքածուները՝ որպես գաղափարների պատկերագրողում (Կոնցեպտուալ թանգարանագիտություն)

Ցեղասպանության կոնցեպցիան զինվորական պատմության թանգարանում

– Հավաքածուները՝ որպես սցենարի հիմք (Առարկայական թանգարանագիտություն)

Եվրոպական Վերածնունդը Լուվրի թանգարանի հավաքածուի միջոցով

○ Սցենարի բովանդակությունը կարող է կազմակերպվել տարբեր տրամաբանությամբ.

Էվոյուցիայի պատմություն (նկարել թագավորներին պատմության միջոցով): Պատմություն՝ հիմնվելով առարկաների վրա (նապոլեոնյան դարաշրջանը պատմական վայրում): Համեմատություն (Մատիսի և Պիկասոյի ոճին մոտ ոճային զարգացում): Տիպաբանական մոտեցում (հին հունական սափորների ձևերը և դեկորները) և այլն:

թ) Միջնորդային միջոցները

Ընտրված միջամտության բանաձևը՝ բովանդակությունը փոխանցելու համար. Տեղեկատվությունը կարող է տարածվել զանազան ձևերով՝ օգտագործելով տարբեր տեխնիկաներ կամ միջնորդության գործակալներ:

Միջնորդության համար կիրառված միջոցների շուրջ գործընթացը վերաձևակերպվում է բովանդակության համաձայն. Խոսքն այն մասին է, որ պետք է գիտակցել հնարավոր միջոցների բազմազանությունը, ընտրել այդ միջոցները հստակ չափանիշներով, հետևել դրանց ներդաշնակ համադրությանը, որպեսզի ծրագրի սցենարը կառուցվի դինամիկ և համահունչ:

▪ Հնարավոր միջոցների բազմազանությունը

Միջնորդությունն օգտագործում է բազմաթիվ միջոցներ՝ տարբեր հանրույթերին ծրագրերի բովանդակությունները փոխանցելու համար:

Կոնֆերանսները, արվեստանոցները, արհեստավորների կամ արվեստագետների կողմից կազմակերպված ցուցադրությունները կարող են կիրառվել միննույն բովանդակությունների շուրջ, հասարակության տարբեր շերտերի համար:

▪ Միջոցների ընտրությունն ըստ կոնկրետ չափանիշների

Միջոցներն ընտրվում են իրենց արդյունավետության համաձայն՝ բովանդակության և այն հանրության համեմատ, ում հասցեագրված է ծրագիրը:

Չափանիշները որոնք պետք է նկատի ունենալ, սրանք են.

- Հարմարվողականության պոտենցիալը թիրախային հանրույթներին

Արդյո՞ք կոնֆերանսը երիտասարդներին ներգրավելու ճիշտ տարբերակ է:

- Միջոցի հարաբերական արդյունավետությունը շրջանառվող բովանդակության համեմատ

Արվեստանոցների ակտուալությունը՝ ընկալելու համար ստեղծման տեխնիկան և դրա հավանական ազդեցությունը պատրաստված իրերի ձևերի վրա, ինչպիսին է ապակեգործ վարպետի արվեստանոցը՝ ապակեգործության գեղագիտական սկզբունքներն ընկալելու համար:

- Միջոցի կամ դրանց կիրառման ձևի օրիգինալությունը:

Միջոցի օրիգինալությունն իրենից որակ չի ներկայացնում: Անհրաժեշտ է փնտրել արդյունավետությունը, որը հաճախ թաքնված է ծանոթ միջոցներում և ավելի հազվադեպ՝ նորերում:

Օրիգինալ միջոցները կարող են անհրաժեշտ դառնալ տարբեր գործոնների միջոցով.

- Նոր հաճախորդին հաշվի առնելը

Ծրագիր մայրիկների և փոքրիկների համար

- Նոր բովանդակությունների հետազոտություն

Մնջախաղը՝ որպես քանդակագործության մեջ հավասարակշռության ընկալման հետաքրքիր ուղղորդիչ:

- Հատուկ սոցիալական իրավիճակ

Շրջագայությունը, որ թույլ է տալիս փոխանցել մշակույթը մի սոցիալական խմբից մեկ ուրիշին

Դա բովանդակություն-միջոց-հանրություն սերտ համապատասխանությունն է, որն իր յուրօրինակությունից զատ ապացուցում է արդյունավետությունը հետապնդած նպատակի մեջ:

▪ **Միջոցների ներդաշնակ համադրումը մեկը մյուսի հետ**

Միջնորդության տարբեր տեխնիկաների կիրառումը պահանջում է մտորում երկու հետևյալ հարթությունների շուրջ՝ ընտրված միջնորդության միջոցներ և կարգ, որում դրանք կիրառվում են՝ տարբեր միջոցների համակցված օգտագործման տրամաբանական կապ:

Ծրագրի իրականացման ընթացքում, երբ կիրառվում են միջնորդության տարբեր միջոցներ, պետք է հաշվի առնել դրանց բնույթն ու տեղը ծրագրի շրջանակներում: Այս շղթայի ներսում միջոցների համադրման հարթություններն են.

- Հերթականությունը, որում օգտագործվել են միջնորդության տարբեր տեխնիկաներ :

Առաջին հերթին ընտրում ենք այցելությունը պատկերասրահ՝, թե որն է արվեստանոց:

- Տրամաբանական կապերի բնույթն ու որակը՝ ստեղծված միջնորդության տարբեր տեխնիկաների միջև:

Ցուցադրության ո՞ր տարբերակն է ավելի արդյունավետ. նախ ներկայացնել խեցեգործության նմուշ, այնուհետև արտադրության ընթացքն արվեստանոցում և արդյունքը, թե կիրառել գործիքներ, այնուհետև բանավոր ներկայացնել տեխնիկան:

- Հարաբերությունը, որը նույն ծրագրի շրջանակներում տարբեր փուլերը կապում է մեկը մյուսի հետ:

Ծրագրերը կարող են կազմված լինել մեկ կամ ավելի փուլերից: Բազմակի փուլերի դեպքում ցանկալի է, որ դրանք նախատեսված լինեն որպես լրացում՝ հետևելով նույն տրամաբանությանը (բնություն, միջնորդային տեխնիկա, կապեր և այլն):

Նույն թեմայով էքսկուրսիան չի կարող լինել նմանատիպ, քանի որ այն այցելությունների մի շրջափուլի մաս է կազմում, կամ քանի որ իրենից ներկայացնում է եզակի փորձ:

ժ) Հանրային մասնակցությունը

Հասարակությունը կարող է հրավիրված լինել որպես դերասան՝ քիչ թե շատ ներգրավված լինելով առաջարկված միջնորդության մեջ:

Հաշվի կառնվեն միննույն ժամանակ հասարակության մասնակցության բնույթն ու նյութական, սոցիալական, մտավոր մասնակցության աստիճանը:

- Միջնորդության տեսակները.
 - Հանրություն/միջնորդ
 - Հանրություն/Հանրություն
 - Հանրություն/Միջնորդային գործիք

Միջնորդի կողմից հանրությանն ուղղված հարցեր ծնող-գավակ համագործակցության մեջ. դրանք տրվում են ընտանիք այցելության ժամանակ, այցելությունների գրքի միջոցով կամ ինտերակտիվ դաշտում:

- Փոխազդեցության բնույթը
 - Ընդհանուր փորձ

Մի խումբ բարձր դասարանցիներ միահամուռ ուժերով ստեղծում են արվեստի գործ՝ բաց երկնքի տակ ցուցադրահանդես այցելելուց հետո:

- Վարքագիծ

Մնջախաղը որպես քանդակված մարմնի դինամիկայի փորձարարական մոտեցում:

- Ստբերի և հիշողությունների փոխանակում

Ստբերի փոխանակում՝ միգրացիային նվիրված ցուցահանդեսից հետո:

- Փոխազդեցության հաճախականությունը և խտությունը

Միջնորդավորված հանրային մասնակցության համար դիմումների թիվն ու որակը մեկ փուլի ընթացքում:

ի) Բովանդակություն - միջնորդային միջոցներ – հանրային մասնակցություն համակարգում

Ձև, որով միանում են թեման, ելույթը կամ առաջարկված փորձը, ընտրված միջնորդության բանաձևերը և այցելուների ներգրավվածության աստիճանն ու բնույթը:

Բարձրացնել տարածքի, ելույթի ընկալումը դեռահասների կողմից՝ բնակիչների շրջանում իրականացվող հարցման միջոցով (միջնորդության միջոց):

Ինչպիսին էլ լինեն բովանդակության պահանջները և որդեգրած միջնորդության տեխնիկաները, նպատակն այն է, որ հանրությունն աստիճանաբար յուրացնի ծրագրի բովանդակությունը: Դա հավանականորեն արվում է նյութական, բայց հիմնականում մտավոր, զգայական փոխազդեցության շնորհիվ: Տարբեր հարթությունների առանձին և համակցված վերլուծությունը (միջնորդություն-բովանդակություն-փոխազդեցության տեխնիկա) թույլ է տալիս նախագծողին դատել յուրաքանչյուր առանձին, և ապա համակցված հարթության համապատասխանության մասին: Նախագիծը կազմողը կարող է դրանով հեշտությամբ արդարացնել իր դիրքորոշումները:

յ) Ծրագրի շուրջ տարվող հետազոտությունների կանխատեսումը

Ընդունված կարծիքն այստեղ այն է, որ ուսումնասիրությունն անհրաժեշտ է կատարել «կիրառական հետազոտության» եղանակով, կամ ավելի մասնագիտական իրավիճակում տարվող հետազոտության եղանակով:

Երբ մտածում ենք ծրագրի հետազոտությունների մասին, մեզ սովորաբար հետաքրքրում են նրանց գնահատման արդյունքները: Իրականում հետազոտության այս տեսակը հանդիսանում է հետազոտությունների հնարավոր տարբերակներից միայն մեկը:

Ծրագրի և նրա արդյունքների որակի ապահովման համար կատարվում են գույզակցվող ուսումնասիրություններ. սրանք արվում են նախագծման և իրականացման փուլերում, դրանց զուգընթաց: Այնուհետև կատարվում են արդյունքների մշակման, գնահատման հետազոտությունները: Այս հետազոտություններն իրականացվում են տվյալների հավաքագրման և մշակման հատուկ մեխանիզմների համաձայն:

- Պլանավորման և իրականացման փուլերին գույզակցվող/զուգընթաց ուսումնասիրություններ

Այս ուսումնասիրությունները ներառում են արդեն իսկ առկա տեղեկատվության պարզ հավաքագրումը, տեղեկատվության համակարգված հավաքագրումը, որն անհրաժեշտ է դրանց ճշգրտության և սինթեզման համար, նոր տեղեկությունների հավաքումը հարցումների միջոցով.

- Առկա տեղեկությունների պարզ հավաքագրում

- Ազգային կամ տարածաշրջանային վիճակագրական տվյալներ արխիվներում, հաշվետվություններում, օրինակ՝ միջավայրի բնութագրերի իմացություն և վստահություն, որ թանգարանի առաջարկը արդիական է այն միջավայրում, որտեղ գործում է թանգարանը
- Թանգարանի տնօրինության կամ բաժնի վարիչների ստեղծած փաստաթղթերում՝ հետևյալ նպատակներով.

- Ճշտել թանգարանի կողմնորոշումը և ներդնել ծրագիրը
- Օգտվել համագործակցության հնարավորություններից
- Իմանալ հաստատության պահանջները ծրագրի համեմատ

(Ֆինանսական, հաճախումների և այլն)

- Տեղեկատվության պարբերական հավաքում, որը վերանայվում և ընդհանրացվում է: Նկատի են առնվում տեղեկատվության հետևյալ տեսակները՝

- Գիտական, որպեսզի ապահովենք ծրագրի բովանդակության ճշգրտությունն ու որակը

- Հոգեբանական կամ սոցիոլոգիական, որպեսզի համոզվենք, որ ծրագիրը համապատասխանում է մասնակիցների բնութագրերին (հասարակական և մշակութային առանձնահատկություններին, այցելուների սպասումներին և ծրագրի բովանդակությունը քննարկելու ունակություններին)
- Թանգարանագիտական, որպեսզի ճշտենք՝ արդյո՞ք ծրագրի տարբեր ասպեկտները համապատասխանում են տվյալ ոլորտի մասնագետների առաջարկություններին:
- o Նոր տեղեկությունների հավաքում
 - Կոնկրետ առանձնահատկություններն այն այցելուների, որոնց հասցեագրված է ծրագիրը (դեռահասներ, տարեցներ, ընտանիքներ և այլն):
 - Նրանց ակնկալիքները
 - Նրանց նախնական գիտելիքներն ու հավաստումները

Կարելի է նաև իրականացնել թեստային ստուգումներ ծրագրի քննադատական ասպեկտների շուրջ, ինչը կարող է հանգեցնել նախագծային որոշ փոփոխությունների:

Ճշտել, թե այցելուները կարո՞ղ են հեշտությամբ օգտվել համակարգչային սարքից, որը նրանց տեղեկատվության հասանելիության հնարավորության է տալիս:

▪ Գնահատման ուսումնասիրություններ

Գնահատման ուսումնասիրություններն արվում են՝ հիմնվելով հետևյալ հարցերի վրա.

- o Ինչ նպատակներ կարող է ունենալ տեղեկությունների հավաքագրումը
 - Ստուգել, թե որքանով ենք հետամուտ եղել ծրագրի նպատակներին
 - Մասնակիցների դրած նպատակները

Հասկանալ, թե ինչպես է թռչում ինքնաթիռը

- Հաստատությանը վերաբերող նպատակները

Երիտասարդացնել թանգարանի պատկերը

- Պարզել ծրագրի այլ հնարավոր ազդեցությունները (դրական, բացասական կամ չեզոք) մասնակիցների կամ թանգարանի համար
- Մանրամասնորեն քննել մեկ կամ մի քանի հետևանքներ՝ ծրագրի մասնակիցների կամ թանգարանի համար
 - o Ո՞ր պահին կարելի է հավաքել տեղեկությունները
 - Իրականացման ընթացքում (վարքի և իրավիճակների ուսումնասիրություն, առաջարկված հանձնարարությունների

արդյունքները՝ տեսակավորում, գանձի որոնում, և այլն, մասնակիցների ստեղծած բանավոր, գրավոր, լուսանկարչական, գեղարվեստական աշխատանքները, ֆիլմերը)

Հիշեցում. Հարկ է նշել ցանկացած շեղում նախատեսվածից (տարածքներ, անձնակազմ), որպեսզի կարողանաք բացատրել, մեկնաբանել ծրագրի որոշ արդյունքները:

– Իրականացումից հետո (հարցաթերթիկների ժողովածու, հարցազրույց կամ տեղեկատվական գործունեություն, որոնք կարող են օգտակար լինել գնահատելիս):

▪ Տվյալների հավաքագրման և մշակման եղանակները

○ Ինչ տեխնիկա օգտագործել.

- Մեթոդներ՝ հիմնված դիտարկման վրա
- Մեթոդներ՝ հիմնված հարցման վրա
- Հարցաթերթիկ
- Ջրույցներ
- Ֆոկուս գրուպ (բանախոսի կողմից հատուկ առաջադրված թեմայով քննարկման խումբ)
- Մեթոդ՝ հիմնված այցելուների ինքնաբուխ ելույթների ժողովածուի վրա
- Մեթոդ՝ հիմնված մասնակիցների ստեղծած արտադրանքի վերլուծության վրա

Այդ արտադրանքները կարող են ներառել պլաստիկ արվեստի գործեր, գրավոր կամ բանավոր ստեղծագործություններ: Կարող են լինել նաև լուսանկարներ, ֆիլմեր, և այլն:

- Մեթոդ՝ հիմնված ուրախ, խաղային վարժություններ օգտագործելու վրա

Այս վարժությունները կարող են բաղկացած լինել առարկաների վերարտադրությունների ճանաչումից, փաստաթղթերի դասակարգումից, կեղծ ցուցահանդեսների, հուշերի պատրաստումից, և այլն:

Նշում՝ Տարբեր մեթոդների և տեխնիկաների օգտագործման մանրամասների համար օգտվեք հետազոտությունների մեթոդաբանության աշխատություններից՝ սոցիոլոգիայի, հոգեբանության, կրթության ոլորտներում:

▪ Տվյալների հավաքագրման և մշակման պայմանները

- Նախատեսել հավաքագրման նյութակենցաղային պայմանները (գտնվելու վայր, գրանցող միջոց, տևողություն)
- Նախատեսել տեղեկությունների հավաքագրման պատասխանատու (թանգարանի մասնագետ / արտաքին գործակալ)

- Նախատեսել տեղեկատվության հետ վարվելու կերպը (ամփոփագիր թերթիկ, բովանդակության վերլուծություն, մաթեմատիկական կամ վիճակագրական գործիք)

- Անձինք, որոնցից հավաքվում են տեղեկությունները

Կարող եք ունենալ ընտրություն.

- Տեղեկություններ հավաքել բոլոր մասնակիցներից և այցելուներից
- Հարցաքննել հետաքրքրված անձանց միայն մի մասին՝ առաջնորդվելով արդյունքների վրա հավանական ազդեցություն ունեցող գործոններով՝ տարիք, սոցիալական կարգավիճակ, սպասումներ, նախնական գիտելիքներ, թանգարանային փորձագիտություն, և այլն: Նմուշը պետք է ներառի բավարար քանակությամբ թեմաներ, որպեսզի կարողանանք, ի վերջո, բաժանել դրանք մի քանի կատեգորիաների՝ ենթախմբերի միջև համեմատություններ անելու նպատակով: Յուրաքանչյուր ենթախումբ պետք է ունենա բավարար թվով այցելուներ, որպեսզի կարողանան ստացված արդյունքների նշանակությունը տալ, մեկնաբանել:

- Ինչպե՞ս վարվել հավաքված տեղեկությունների հետ

Տեղեկատվությունը կարելի է վերլուծել.

- Քանակական եղանակով

Քանի՞ այցելու կվերադառնա երկրորդ սեմինարին մասնակցելու

- Որակական եղանակով

Շահագրգիռ այցելուների կողմից տրված բացատրությունները՝ հիմնավորելու համար այդ վերադարձը

խ) Կառավարման կանխատեսումը

Ծրագրի նյութական հարթություններին վերաբերող կանխատեսումներն են.

- Ժամանակի կառավարումը.

Ծրագրի գործարկման օրացույց և հաստատության գործունեության օրացույցի մեջ ծրագրի ժամանակավոր ներմուծում

Հարմար այցելության գրաֆիկ առավել պատանհիների և հաստատության համար

Դահլիճում ծրագրված համաժողովն արդյոք կավարտվի՞ ժամանակին, որպեսզի չխաթարվի թանգարանի փակման ընթացակարգը:

- Ծրագրի ամսաթվերի և թիրախային հանրության համար հարմարեցված օրացույց

Ո՞ր պահին կանխատեսել ծրագիր և դպրոցական հասարակությանը հասցնել

տեղեկատվությունը:

- Նյութական միջոցների կառավարումը

Ի՞նչ տեսալսողական սարքավորումներ են պահանջվում առաջարկվող ծրագրի համար:

- Անձերի կառավարումը
 - Հասարակության կառավարումը

Հաշվարկային հոսքերի կազմակերպում, նույնքան շահագրգիռ հասարակության, որքան հաստատությունում ներկա այլ հանրության:

- Ներգրավված մասնագետների կառավարում

Չգրադվածությունը և հարաբերական փորձաքննությունը կդիտարկվեն օժանդակության ձևով:

Ե՞րբ տվյալ սյուժեի լավագույն բանախոսն ազատ կլինի:

ձ) Հաղորդակցությունը

Հաստատության ներսում և նրանից դուրս ծրագրի տարածումը ապահովել թույլ տվող բովանդակություններն և միջոցներն են հաղորդակցության հիմքում: Սա ներառվում է հաստատության ամբողջական հաղորդակցության մեջ:

- Ներսում այն ունի բազմաթիվ նպատակներ.
 - Տնօրինության և տարբեր բաժինների կողմից վավերացնել ընտրված տարածման միջոցները:
 - Շահագրգռել ծրագրում տարբեր ծառայությունների՝ նրանց համագործակցությունն ապահովելու ձևով:
- Դրսում այն կարող է վերցվել կամ հատուկ մասնագիտացված ծառայության, կամ հենց հասարակական ծառայության հոգածության ներքո:

Բոլոր դեպքերում դիտարկման ասպեկտները կլինեն նույնը.

- Բովանդակությունը
- Վերապահված տոնը (խոսքի) ըստ թիրախ հանրության
- Տեղեկատվության փոխանցման համար ընտրված միջոցը:

Հաղորդակցության տվյալ ասպեկտները կտարբերակվեն ըստ.

- թանգարանի աշխարհագրական դիրքի
- Ֆինանսական ազատ միջոցների

- թիրախային հանրության նպատակի
- ծրագրի ընթացակարգի հանգամանքների
- հաղորդակցության ընտրության՝ նպատակ ունենալով թիրախային հասարակությունը կամ հերթափոխությունները

2. Ծրագրի իրականացումը

Դա նախագծում - պլանավորում փուլի իրականացումն է և ծրագրի ընթացքի իրականությանը հարմարվելը: Այն ներառում է. ա) գործարկումը, բ) գործողության ընթացակարգը:

ա) Գործարկումը

Դա ծրագրի տարբեր ասպեկտների նյութականացման պատրաստումն է:

Ծրագրում ներառել մուլտիմեդիայի գործածությունը, այսինքն՝ զարգացնել սցենար, աշխատել ռեժիսորի, արտաքին մատակարարների հետ, քննարկել տեխնիկական ասպեկտները, դիտարկել, թե մուլտիմեդիայի գործիքներն ինչպես կարող են խելացիորեն և նյութատեխնիկական ապահովվածությամբ ներմուծվել պատկերասրահներում, ճշտել նրանց համապատասխանությունը ներհոսքի իրավիճակների հետ, և այլն:

Նյութականացումը իրականացվում է նկատի ունենալով հետևյալ ասպեկտները.

- **Ժամանակի** կառավարում

Հարկավոր կլինի կազմել ծրագրի իրականացման օրակարգը

- Նախապատրաստության գրառում օրագրում
 - տարբեր փուլերի համար անհրաժեշտ ժամանակը
- Ընթացքի գրառում օրագրում
 - Ծրագրի հաճախականության, տևողության գրառման օրացույց

Դահլիճում ծրագրված համաժողովը կավարտվի՞ ժամանակին, որպեսզի չխաթարվի թանգարանի փակման ընթացակարգը:

- Անհրաժեշտ **նյութերի** տեխնիկական նկարագրությունը

- Նյութի առանձնահատկությունների նկարագրում (իրերի, որ պետք է արտադրվեն՝ օր.՝ մանրակերտ)
- Նյութի/սարքավորման իրացում ուղղակիորեն, կամ ծառայություն մատուցողի միջոցով
- Ծառայություն մատուցողի ընտրություն
- Նյութերի իրացման վերահսկում ներսում/ինտերն կամ դրսում/էքստերն կարգով:

- **Ընտրել կամ հավաքագրել բանախոսներին**

- Ծառայության կադրերի և վարձատրումների հաստատումը
- Բանախոսների վերապատրաստումը
- Բանախոսների նախնական նյութատեխնիկական ապահովության տեղեկատվությունը

- **Գործընկերների համաձայնությունը ձեռք բերել**

Համաձայնությունը կարող է ապահովել բազում ասպեկտներ.

- Իրավական՝ մտավոր սեփականություն, աշխատանքի իրավունք և այլն
- Ադմինիստրատիվ՝ գործընկերների ստատուսը և դրանց հետևանքները
- Ապահովագրական՝ բանախոսների ապահովումը և պատասխանատվությունը
- Ֆինանսական. պարտականությունների և եկամուտների բաժանումը
- և այլն

- **Հաղորդակցություն**

- Հաղորդակցության, ներքին և արտաքին տեղեկատվության միջոցների իրացման վերահսկում
- Արտաքին և ներքին հաղորդակցության ու տեղեկատվության տարածման վերահսկում

- **Անվտանգության անհրաժեշտ պայմանների ստուգում բանախոսների և մասնակիցների համար**

- Նյութի կամ իրավիճակի հարմարավետության կամ ֆունկցիոնալության նախնական փորձարկում
 - **Բյուջեի վերահսկման** գործիքների պատրաստում, ֆորմատավորում: Դրանք կօգտագործվեն ինչպես գործարկման, այնպես էլ իրականացման փուլում:
- Ծախսային մասի ճշգրիտ բաշխում
- Ծախսերի ու եկամուտների համակարգված վերահսկման փաստաթղթերի ապահովում
 - Չգերազանցել սահմանված բյուջեն
 - Կառավարել ծախսերն ըստ ֆինանսավորման օրացույցի (բյուջեի ամբողջականությունը սկզբում, զարգացման ընթացքում, վերջում)
 - Կարգավորել ծախսերը ծրագրի ընթացքում
- **Ընդունման պրոցեսի (լոգիստիկայի) կազմակերպում** (տեղեկատվության ընդունման կառավարում, շահառուների և բանախոսների ընդունելության, գրանցման և այլ միջանկյալ հանգամանքների կառավարում)
 - նախապես հանդիպումներ նշանակելու կամ տեղում դրանց գրանցման լոգիստիկա
 - շահառուների ընդունելության լոգիստիկա (հերթերի կառավարում, հանդերձարաններ, տեղեկատվություն, փաստաթղթերի բաշխում և այլն)
 - բանախոսների ընդունելության լոգիստիկա
 - **Հանրության** կառավարում
 - Շահագրգիռ հանրություն
 - Արտաքին հանրություն

Ինչպե՞ս կազմակերպել, որպեսզի ծրագրի գործընթացը չխաթարի այլ այցելուների այցը թանգարան, և որ վերջիններս չմիջամտեն ծրագրի անցկացմանը:

բ) Գործողությունների ընթացքը

Ծրագրի մտավոր և նյութական ասպեկտների իրականացումը բանախոսների կողմից

Դա սահմանված նպատակների արդյունավետ նյութականացումն է հետևյալ միջոցների օգնությամբ՝ շրջակա միջավայր, հանրություն, բանախոս, բովանդակություն և միջամտության բանաձևեր, ռեսուրսներ և այլն:

Նախաձեռնել նոր ընտանեկան կիրակնօրյա ծրագիր, ինչպես օրինակ՝ մայրերի տոնին նվիրված օր՝ մանկական սննդի մի ձեռնարկության ֆինանսական աջակցությամբ, ինչպես նաև առաջարկել նյութատեխնիկական աջակցություն Թանգարանի բարեկամների ասոցիացիայի անդամ հանդիսացող տատիկների համար:

- Այս նյութականացումը պահանջում է շրջակա միջավայրի շարունակական կառավարում
- Նյութատեխնիկական սպասարկման փորձարկում և ստուգում

Արդյո՞ք հանդերձարանները հարմարեցված են թիրախային այցելուների կատեգորիային: Ի՞նչ անել, եթե ծրագրում ընդգրկված որևէ առարկայի մոտ կա մարդկանց չափազանց մեծ խումբ, կամ եթե այդ տարածքները անսպասելիորեն փակ են անվտանգության նկատառումներից ելնելով, կամ տարվում են նորոգման աշխատանքներ:

- Հաղորդակցություն տվյալ հաստատության այլ մասնագետների հետ

Արդյո՞ք անվտանգության աշխատակիցները տեղեկացված են և համաձայն են, որպեսզի թանգարանի ցուցասրահներում անցկացվեն պարի դասընթացներ:

- Գործողությունների իրականացման բարենպաստ պայմանների ստուգում (ֆիզիկական հարմարավետություն, զգայական հարմարավետություն (լսել), ներգրավված այցելուների և մնացած մարդկանց մտավոր հարմարավետություն)

Ծրագրի իրականացումը չի խանգարում մյուս այցելուների շրջայցին, ինչպես նաև մյուս այցելուները չեն խոչընդոտում ծրագրի իրականացմանը:

- Նախատեսված գործողությունների ընթացքի հնարավոր հարմարվողականություն

Որո՞շ գործողություններ նախատեսված ժամանակից ավելի երկար են տևում, որը հարթվում է մյուս գործողությունների հաշվին: Կրճատել շրջայցի տևողությունը, եթե այցելուները տարեցներ են:

- Նյութականացման փուլում իրականացվում է այն սցենարը, որը նախատեսվել է նախագծման փուլում
- Տվյալ դեպքում կարող է լինել երկու հավանական սցենար.
 - Ծրագիր նախագծողը նաև բանախոսն է
 - Ծրագիր նախագծողը ծրագրի անցկացումը/անհիմացիան հանձնում է մեկ այլ բանախոսի:
- Այս երկու դեպքերում էլ պետք է ապահովել գործունեության ներկայացումը.
 - Բանախոսի ներկայացում
 - Տեղի ներկայացում
 - Թեմայի ներկայացում
 - Տեղի և թեմայի միջև գոյություն ունեցող կապի ներկայացում
 - Ծրագրի գործողությունների հաջորդականության ներկայացում
- Ի՞նչ կապ կարող է լինել մշակված սցենարի և իրականացված սցենարի միջև:

Կարող ենք քննարկել սցենարը չփոխելու մի շարք ուղիներ.

- Խստորեն հետևել բովանդակությունների ցուցումներին, մեկնաբանվող առարկաների, գործողությունների հաջորդականության ցուցումներին, յուրաքանչյուր գործողությանը հատկացրած ժամանակի ցուցումներին:
- Ամբողջովին կամ մասնակի պահպանել նախկինում սահմանված, կրթական գործընթացին առնչվող նպատակները (*հարցեր տալ, օգտագործել միմիկան*), նոր ձեռք բերվող հասկացություններին առնչվող նպատակները, (*ստրատիգրաֆիան հնագիտության մեջ*), պարտադիր ներկայացվելիք նյութերին վերաբերող, գործողությունների հաջորդականությանը, ժամանակի բաշխմանը վերաբերող նպատակները և այլն:
- Անվերապահորեն հարմարվել այցելուների՝ որևէ թեմայի շուրջ արտահայտած ցանկություններին և տրվող հարցերին:

Շրջայց-երկխոսություն՝ առաջարկված միջնորդի կողմից, ով պատասխանում է այցելուների հարցերին և ցանկություններին:

- Վերափոխել սցենարը քիչ թե շատ առանցքային կերպով
- Երբ բանախոսը նախագծողն է, վերափոխումը կարող է կատարվել տեղում
- Երբ բանախոսը նախագծողը չէ, հնարավոր է բանախոսի վերափոխում տեղի ունենա՝ հենվելով փորձի վրա, նախագծողի դիտարկումից հետո, կամ բանախոսի փորձին վերադառնալուց հետո
- o Ծրագրի փակում
 - Մինթեզի և ամփոփման կարևորությունը, որը թույլ է տալիս հեշտությամբ մտապահել և սերտել
 - Ժամանակային հնարավոր երկարաձգումները թեմայի շուրջ եղած դրդապատճառների, հաստատության, կամ այլ հաստատությունների կողմից առաջարկված կողմնակի գործողությունների պատճառով
- o Որպես ծրագրի շարունակություն
 - Վերադարձ փորձին տարբեր ներգրավված մարդկանց կողմից՝ միջնորդներ, դեկավարներ, անվտանգության աշխատակիցներ
 - Առաջարկությունների հավաքագրում
 - Ծրագրի արդյունքների ֆորմալ գնահատում

3) Ծրագրի արդյունքների գնահատումը

Տվյալներ են համարվում հավաքագրված համապատասխան տեղեկությունները: Վերջիններս, որ նախատեսվում են ծրագրի պլանավորման փուլում, արդեն հավաքագրված են լինում ծրագրի իրականացման փուլում: Դրանց ուսումնասիրությունը ներառում է երկու փուլ՝ մշակում (ա) և հաշվետվության կազմում (բ)

ա) Տվյալների մշակումը

Տվյալների մշակումը կազմակերպվում է հինգ առանձին և միմյանց հաջորդող փուլերով՝ տվյալների հավաքագրում, տվյալների նկարագրություն, տվյալների մեկնաբանություն, տվյալների քննադատություն, եզրակացություններ և ուսումնասիրության հետագա քայլեր:

- Հավաքումը/համադրումը

Տվյալներ հավաքագրելը նշանակում է կուտակել տեղեկություններ, որոնք արդեն հավաքել ենք յուրաքանչյուր հարցի արդյունքում, որ տվել ենք ինքներս մեզ:

- Նկարագրությունը

Տվյալներ նկարագրել նշանակում է դրանք ներկայացնել համակարգված կերպով:

Հետազոտությունը վերաբերում է էքսկուրսավարի ուղեկցությամբ շրջայցի մասնակիցների ցանկությանը՝ վերադառնալ թանգարան: Այցելուների 70%-ը հայտնում է այս ցանկությունը:

Տվյալները պատասխանում են հարցերին, որ տալիս ենք ինքներս մեզ (այստեղ խոսքը վերադառնալու ցանկության մասին է), բայց դրանք կարող են նաև տրամադրել տեղեկություններ, որոնք մենք չէինք նախատեսել:

Մակայն այդ նույն այցելուների 40%-ն օրինակ ցանկություն է հայտնում ունենալ մեկ այլ բանախոսի ուղեկցությամբ շրջայց, ով գուցե կտրամադրեր ավելի մանրամասն տեղեկատվություն և կխոսեր ավելի դանդաղ:

Այսպիսով, սկսում ենք նկարագրել առաջին տվյալներն այն հարցերի վերաբերյալ, որ տալիս ենք ինքներս մեզ, այնուհետև երկրորդները՝ չնախատեսված հարցերի վերաբերյալ:

- Մեկնաբանումը

Տվյալների մեկնաբանումը կայանում է դրանց իմաստը հայտնաբերելու մեջ՝ վերատեղադրելով այդ տվյալներն իրենց համատեքստում

Այցելուների 70% - ը ցանկություն է հայտնում վերադառնալու, իսկ սա նշանակալի է՝ համեմատած նախկինում հայտնաբերված արդյունքների հետ (40%): Բանախոսի միջամտելու ոճի կարևորությունը նույնպես պետք է հաշվի առնել:

- Քննադատությունը

Տվյալների քննադատությունը կայանում է հետևյալում. պետք է հարցնենք ինքներս մեզ, թե ինչ աստիճանի վստահություն ունենք արդյունքների նկատմամբ

Այստեղ շատ փոքր թվով այցելուներ են մասնակցել հարցման (15)՝ խիստ առանձնահատուկ բնույթի (թանգարանների բարեկամներ)

- Եզրակացություններ և հետևանքներ, որ պետք է հաշվի առնել հետագա ուսումնասիրություններում

Նպատակահարմար է միաժամանակ դաս քաղել բոլոր հետևանքներից՝ և՛ ձեռք բերված արդյունքներից, և՛ արված քննադատություններից:

Ավելի եզրափակիչ արդյունքների հասնելու համար նախընտրելի է սույն ուսումնասիրությունն անցկացնել ավելի շատ այցելուների հետ և տարբեր բնույթի:

բ) Ձեկույցի պատրաստումը

Սա կատարած ուսումնասիրության նկարագրությունն է: Այս նկարագրությունը կարող է լինել մի քանի ձևով: (ա) Ամփոփ ներկայացում՝ ուղղված տնօրենին և ղեկավար անձնակազմին, որտեղ խոսվում է հիմնականում ծրագրի արդյունքների և հաստատության համար դրանց հետեւանքների մասին; (բ) ամբողջական զեկույց, որը նախատեսված է հաստատության արխիվների/ֆոնդերի և/կամ հրապարակման համար:

- Ամփոփ ներկայացում

5 - 10 էջից բաղկացած տեքստ է, որը շատ հակիրճ հիշեցնում է ուսումնասիրության առարկան և պատմում՝ ինչպես է այն իրականացվել, որպեսզի հնարավոր լինի ավելի մեծ տարածք հատկացնել արդյունքների եւ դրանց նշանակության, հետեւանքների նկարագրությանը: Արդյունքների մասին կարդալը եւ հասկանալը սովորաբար հեշտացվում է թվարկումների միջոցով:

- Ամբողջական հաշվետվություն

Այն ներառում է ուսումնասիրության ինստիտուցիոնալ համատեքստի նկարագրությունը: Սա մի կարճ ներկայացում է, որտեղ տեղ են գտնում հարցերը, որոնց փորձում է պատասխանել եւ այն դրդապատճառները, որոնք մղեցին ծրագրի կազմակերպմանը; հավաքագրված տեղեկատվության նույնականացումը, օգտագործված գործիքների և միջոցների նկարագրությունը, որոնցով ձեռք են բերվել այդ տեղեկությունները, դրանց օգտագործման եղանակները, տեղեկատվության ծագման նույնականացումը (խմբեր, նմուշներ և այլն); ընդհանուր նկարագրությունը, վերջապես արդյունքների մեկնաբանությունն ու քննադատությունը, որ պետք է տրվի հետագա ուսումնասիրության:

4) **Վերամշակումը**

Չնախատեսված երևույթների ճշգրիտ կառավարումից գատ պլանավորված ծրագիրը կարող է կրել ավելի էական փոփոխություններ, որոնք կոչվում են վերամշակում: Դրանք կարող են առաջ գալ հետևյալ հանգամանքներից.

- Ծրագրի իրականացման ընթացքում մասնագետների կողմից արված ոչ պաշտոնական դիտարկումներ
- Այցելուների կողմից ինքնաբոխ արտահայտված կարծիքների ժողովածու (օր.՝ տպավորությունների մատյանը)
- Գնահատման ուսումնասիրությունից ստացված արդյունքներ

- Ջարգացման մադթանքներ հիմնարկի ղեկավարության կամ աշխատակիցների կողմից

Վերամշակումը կարող է վերաբերել ծրագրի նպատակներին (ա), ընթացքին (բ), քանախոսներին (գ):

ա. Նպատակները կարող են վիճարկվել

- իրենք իրենց մեջ

Թանգարանը ֆորմալ կրթության համար շահեկան վայր չէ, ինչպես նախկինում կարծում էին

- Ելնելով հաստատության կողմնորոշումների էվոյուցիայից

Ծրագիրը բավականաչափ չի համապատասխանում խոցելի խմբերի հանդեպ թանգարանի քաղաքական վերակողմնորոշմանը

- Ելնելով դիտարկվող հանրության էվոյուցիայից

Փոփոխություններ դպրոցի ուսումնական ծրագրերում

բ. Ծրագրի ընթացքը կարող է փոփոխվել, քանի որ

- Այն մասամբ անհարմար է դիտվել գնահատման ուսումնասիրության արդյունքում
- Այն չէր կարող իրականացվել այնպես, ինչպես նախատեսված էր:

Չափազանց երկար ծրագիր է, որը հանգեցնում է փուլերից մեկի կրճատմանը

գ. Վերամշակումը պոտենցիալ կերպով վերաբերում է բոլոր քանախոսներին՝ ներգրավված ինտերն և/կամ էքստերն կարգով: Այն կանցկացվի մասնակցային եղանակով, շահագրգիռ կողմերի հետ:

Քանախոսների բնույթի փոփոխություն

Վերամշակումը ամբողջովին կախված չէ գնահատման ուսումնասիրությունից.

- Այն կարող է ներառել ուսումնասիրության արդյունքների միայն որոշ կողմեր:

Հաշվի առնել արդյունքները բավարարվածության առումով, այլ ոչ թե ուսումնառության:

- Այն կարող է նույնիսկ հեռացնել դրանք (ուսումնասիրության արդյունքները) ընդհանրապես, քանի որ անհամատեղելի են հաստատության բնույթի կամ առաքելության հետ:

Թանգարանային առարկաներին, ստեղծագործություններին դիպչելու այցելուների ցանկությունը՝ դրանք ավելի լավ գնահատելու համար:

Եզրակացություն

Այս գործիքի մշակման ընթացքում հարցված որոշ մասնագետներ ընդգծել են նրա հարաբերական ծանրությունը, նշելով, որ նրանում արծարծվող բոլոր չափերը, բացի, թերևս, գնահատմանը և վերափոխմանն առնչվողներից, ինքնաբուխ կերպով հաշվի էին առնվում որևէ ծրագրի մշակման ժամանակ:

Այստեղ ներկայացված ցուցումների կանոնավոր, համակարգված օգտագործումը, օրինակ՝ ինչպես դա արվել է առաջին «ՄԵԿԱ-ի օրինակելի ծրագրերի մրցանակի» շրջանակներում, հստակորեն ընդգծել է նման գործիքի առավելությունները: Իսկապես, սրա օգտագործումն ունեցել է բազում բարենպաստ ազդեցություններ, մասնավորապես.

- ամենատարբեր ասպեկտների մշակում և կիրառում
- դրանց ավելի խորացված նկարագրություն
- արված ընտրությունների ավելի լուսաբանված հիմնավորում
- ներկայացված ծրագրի արդյունքների գնահատման գործիքների ավելի

համակարգված ինտեգրում և հավանական հետևանքների վերամշակման հնարավորություն:

Մասնագետի համար - Բոլոր ասպեկտների քննումը մասնագետին թույլ է տալիս յուրաքանչյուր փուլում ընտրել լուծումներից հնարավորինս լավագույնը՝ ելնելով իր իսկ իրավիճակից:

Գիտաշխատողի համար - Մանրամասն վերլուծական նկարագրությունը թույլ է տալիս որոշել այն ասպեկտները, որոնք խորհելու հետաքրքրություն են առաջացնում, ինչպես նաև դյուրացնում է վարկածների ստեղծումը և ընդլայնում մեկնաբանելու հնարավորությունները:

Կարելի է համարել, որ մոտեցել ենք օրինակելի նախագծի (Լավագույն փորձի), քանի որ դիտարկվել է տարբեր ասպեկտների և գործոնների մի ամբողջ շարք, որոնք թույլ են տալիս կայացնել առավել համապատասխան որոշումներ՝ հաշվի առնելով մեր ունեցած ռեսուրսները, մարդկանց, որոնց ներգրավում ենք, նպատակները, որոնց հետամուտ ենք լինում, և խոչընդոտները, որ կարող են հանդիպել: Այս պրակտիկան, որն ընթանում է շարունակական փորձերով, նախագծին խոստանում է հաջողության լավագույն հնարավորությունները: